



ՄՈՒՐԲ ՅԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Մ ԿԵՂԵՅԻ

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱԷՆ ԵՏՔ ԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ 2 ՓԵՏՐՈՒՄ 2025

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (62.1-12)

Ուստի պիտի չլռեմ, Սիրոնի սիրոյն, անդադար պիտի աշխատի մեր սրբապատկեր Տառնի լոյսի պէս եւ անոր փրկութիւնը ծագի լոյսի պէս եւ անոր փրկութիւնը փայլատակէ ջահի մը պէս: Այն ատեն հեթանոսները պիտի տեսնեն արդարութիւնդ, ո՛վ Երուսաղէմ, բոլոր թագաւորները պիտի տեսնեն քու փառքդ եւ քեզ պիտի կանչեն նոր անունով մը որ Տէրը ինք պիտի տայ քեզի: Տիրոջ ձեռքին մէջ վայելուչ պսակ մը պիտի ըլլաս. արքայական թագ պիտի ըլլաս Աստուծոյ ձեռքին մէջ: Այլեւ բնաւ «Լքուած Կին» պիտի չկոչուիս, ո՛չ ալ երկիրդ «Աւերակ» պիտի անուանուի. այլ ես քեզ «Նախասիրածս» պիտի կոչեմ, իսկ երկիրդ՝ «Բնակուած Են», որովհետեւ Տէրը պիտի հաւանի քեզի եւ երկիրդ բնակութեամբ պիտի խոնուի: Ինչպէս երիտասարդ մը եւ կոյս մը նոր ընտանիք կը կազմեն, այնպէս ալ զաւակներդ քեզի հետ նոր ընտանիք պիտի կազմեն. եւ ինչպէս փեսան հարսով կ'ուրախանայ, այնպէս ալ Աստուծոյ քեզմով պիտի ուրախանայ: Ո՛վ Երուսաղէմ, պարիսպներուդ վրայ պահապաններ կարգեցի որոնք անդադար գիշեր-ցերեկ Տիրոջ պիտի աղաղակեն: Մի՛ լռէք, ո՛վ աղօթողներ, հանգիստ մի՛ տաք Աստուծոյ, մինչեւ Երուսաղէմը վերականգնէ եւ գայն երկրի պարծանքը դարձնէ: Տէրը հետեւեալ երդումը ըրաւ, որ պիտի կատարէ իր փառքով, իր զօրաւոր բազուկով. «Ա՛լ բնաւ ցորենդ

թշնամիներուդ պիտի չտամ որպէս կերակուր, օտարներու զաւակները պիտի չխմեն գինիդ որուն համար դուն վաստակեցար. այլ դո՛ւն պիտի հնձես ու դուն վայելես քու բերքդ եւ փառք տաս Տիրոջ, այգեկութք պիտի ընես ու դուն խմես գինիդ սրբարանիս սրահներուն մէջ»: Ուստի դուրս թող գան բնակիչներդ, ո՛վ Երուսաղէմ, որպէսզի ճամբաները պատրաստեն, շաւղները հարթեն եւ ճամբայ բանան վերադարձող իմ ժողովուրդիս, մաքրեն ճամբաները քարերէն եւ հեթանոսներուն տանին Տիրոջ նշանը. որովհետեւ ահա Տէրը իր ձայնը լսելի դարձուց մինչեւ աշխարհի ծայրերը, ըսելով. «Ըսէ՛ք Երուսաղէմի բնակիչներուն.- Ահա Փրկիչդ կու գայ հետը բերելով իր շահած ժողովուրդը, անոնք՝ որ ինք փրկեց»: Անոնք «Սուրբ ժողովուրդ» պիտի կոչուին, կամ «Տիրոջ փրկածները», իսկ դուն, ո՛վ Երուսաղէմ, «Յանկալի» պիտի կոչուիս, պիտի կոչուիս «Քաղաք» որ Տէրը չլքեց»:

«Ահա Փրկիչդ կու գայ հետը բերելով իր շահած ժողովուրդը, անոնք՝ որ ինք փրկեց»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՏԻՄՈԹԷՆՍԻՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ (2.15-19)

Աշխատէ որ Աստուծոյ աչքին ըլլաս այնպիսի մշակ մը որ իր գործերուն համար ամենալիք բան մը չունի, որպէս մէկը՝ որ ուղիդ կերպով կ'ուսուցանէ Աստուծոյ ճշմարիտ պատգամը: Հեռո՛ւ կեցիր հաւատքի ճշմարտութիւնները խեղաթիւրող պարապ վիճաբանութիւններէ, որոնք հետզհետէ մարդիկը Աստուծոյ հեռացնելու կը ծառայեն միայն: Այդպիսի

խօսքերու ձգած թոյնը քաղցկեղի պէս կը կրծէ մարդս: Այդպիսի խեղաթիւրող վիճասէրներ էին Հիմենոս եւ Ֆիլետոս, որոնք ճշմարտութենէն շեղեցան եւ շատերու հաւատքը քանդեցին, ըսելով թէ մեռելներու յարութիւնը արդէն տեղի ունեցած է: Բայց Աստուծոյ դրած հաստատուն հիմը կանգուն կը մնայ: Անոր վրայ գրուած է. «Տէրը կը փրկէ անոնք որոնք իրն են», եւ, «Ով որ Տիրոջ կը պատկանի՝ թող հեռու մնայ անիրաւ գործերէ»:

«Տէրը կը փրկէ անոնք որոնք իրն են»

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ (6.39-47)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ. - «Զիս զրկող Հօրս կամքն է՝ որ չկորսնցնեմ ո՛չ իսկ մէկը բոլոր անոնցմէ որոնք ինձի տուաւ, այլ յարուցանեմ զայն վերջին օրը: Հօրս կամքը հետեւեալն է. ով որ տեսնէ Որդին եւ հաւատայ անոր՝ յաւիտենական կեանք կ'ունենայ, եւ ես պիտի յարուցանեմ զայն վերջին օրը»:

Հրեաները սկսան տրտնջալ իրեն դէմ, որովհետեւ ըսած էր թէ «Ես եմ երկինքէն իջած հացը», եւ կը հարցնէին. «Այս մարդը Յովսէփի որդին Յիսուսը չէ՞, որուն հայրն ու մայրը կը ճանչնանք. ինչպէ՞ս ուրեմն կ'ըսէ՝ «Ես երկինքէն իջայ»»: Յիսուս անոնց պատասխանեց. «Կը բաւէ դուք ձեզի քրթմնջէք: Ոեւէ մէկը չի կրնար ինձի

Ոեւէ մէկը չի կրնար ինձի գալ եթէ զիս զրկող Հայրը զայն ինձի չբերէ...:

գալ եթէ զիս զրկող Հայրը զայն ինձի չբերէ. եւ ես պիտի յարուցանեմ զայն վերջին օրը: Մարգարէութիւններուն մէջ գրուած է. «Ամէն մարդ Աստուծմէ սորված պիտի ըլլայ»: Ով որ Հօրմէս կը լսէ եւ իրմէ կը սորվի՝ ինձի կու գայ: Ոչ ոք Հայրը տեսած է, բացի անկէ որ Աստուծմէ է, որովհետեւ միայն անիկա տեսած է Հայրը: Ու ես կ'ըսեմ ձեզի. Ով որ ինձի հաւատայ՝ յաւիտենական կեանքը կ'ընդունի»:

ՏՆՕՐՀՆԷՔ
 Տնօրհնէք փափաքող
 ընտանիքները,
 թող բարեհաճին դիմել
 Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,
 հեռաձայնելով
 514 331 5445 x203 թիւին,
 կամ՝ 514 909 5203 թիւին:

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
 ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԸ
 ԱՆԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՅԷ ԿՊՊԻԵԼՈՎ
 ԵԿԵՂԵՅՈՅ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ:

ԱՅԹԵԼԵՅԷ՛Ք
ԵԿԵՂԵՅՈՅՈՅ
ԴԻՒԱՏԵՏՐԻ ԷՁԸ
ԵՒ
ՁԵՐ ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ
յԱՅՏԵՅԷ (like).
[www.facebook.com/
 SourpHagopChurch
 Montreal](http://www.facebook.com/SourpHagopChurchMontreal)
ԱՅԹԵԼԵՅԷ՛Ք ԱՎԵԻ
Ս. ՅԱՍՈՔ
ԱՌԱՋԱՆՈՊԱՆԱՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅՈՅ ԿԱՅԷՁԸ՝
www.sourphagop.net